«ՊՈԼՈԺԵՆԻԵԻ» ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կ. Վ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց անմիջապես հետո ցարական կառավարությունը, մի կողմ թողնելով ռուսական կայսրության շրջանակներում հայկական պետականության վերականգնման իր երբեմնի խոստումները, սկսեց շատ զգույշ, բայց և հետևողականորեն իրագործել նրա գաղութացման քաղաքականությունը։ Զենքի ուժով նվաճված երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական յուրացումը և գաղութացումը միայն կարող էին ապահովել ու հարատև դարձնել ցարիզմի տիրապետությունն Արևելյան Հայաստանում, հնարավորություն տալ ինչպես կառավարությանը, այնպես էլ ռուս կալվածատեր-ազնվականներին ու առևտրաարդյունաբերողներին՝ առավելագույն օգուտներ քաղել այս նոր գաղութից։

Ցարիզմի այս ձգտումների հաշող իրականացման ամենից նպատակահարմար միջոցը, իհարկե, նոր նվաճված երկրում անմիջապես ցարական բյուրոկրատական վարչաձև և օրենքներ մտցնելն էր, երկրի կառավարման գործը ռուս չինովնիկության ձեռքում կենտրոնացնելը։ Սակայն եթե ազգային որոշ ծայրամասերում ցարական կառավարությունը գաղութացման այս քայլերն անց էր կացնում առանց այլևայլության և ավելորդ «քաղաքավարության», ապա Արևելյան Հայաստանում տեղական մի շարք առանձնահատկությունների ու խոչընդոտների պատճառով ստիպված էր գործել մեծ զգուշությամբ։

Արևելյան Հայաստանն իր գաղութային տիրապետության ընդհանուր տլորտը ներքաշելու քաղաքականության հիմնական օղակներից մեկը հայկական եկեղեցու նկատմամբ ցարիզմի կիրառած միջոցառումներն էին։ Հայ եկեղեցու հանդեպ այդ «ուշադրությունը» պատահական չէր։ Կային մի շարք հանգամանքներ, որոնք այս բնագավառում ցարիզմի վարած քաղաքականությանը հաղորդում էին առանձնահատուկ գծեր։ «Եկեղեցու դերը նշանակալից էր հայ ժողովրդի կյանքում։ Պետականության կորստից հետո, դարեր շարունակ, հայ եկեղեցին էր այն միակ կազմակերպությունը, որ կրում էր համազգային բնույթ և միմյանց էր շաղկապում, ինչպես հայ ժողովրդի տարանջատված և տարբեր պետությունների տիրապետության տակ գտնվող հատվածները, այնպես էլ այն հայ զանգվածներին, որոնք ապաստան էին գտել աշխարհի զանազան ծայրերում։ Պարսկական և թուրքական տիրապետության շրջանում եկեղեցին հայ ժողովրդի ազգապահպանության գործում զգալի դեր էր կատարում»[1]։ Էջմիածնի այս դերը, որպես համայն հայության համար կենտրոնաձիգ և մեծ հեղինակություն վայելող ուժ, ցարիզմը վաղուց էր հասկացել և այժմ մտադրվում էր «օգտագործել այդ աթոռի բարոյական հեղինակությունն ամբողջովին, դարձնելով նրան մի պարզ գործիք ռուսաց արտաքին քաղաքականության համար»[2], ու նրա միջոցով իր ազդեցությունը տարածել արտասահմանի հայության վրա։ Սակայն մյուս կողմից էլ, Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական գործերում Էջմիածնի կաթողիկոսության մասնակցությունը բացառելու և իր գաղութային նպատակներն իրագործելու համար, ցարական կառավարությունը պետք է սահմանափակեր կաթողիկոսական իրավունքները, որը, բնականաբար, ուղեկց-

---

1 Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974, էջ 211։

2 Լ. Ե., Երկերի ժողովածու, հ. IV., Երևան, 1984, էջ 489։

վում էր հայ եկեղեցու ներքին գործերին պետական միջամտության ուժեղացմամբ։

Ահա հենց այս խնդրի լուծումն էր, որ երկվություն էր մտցնում ցարիզմի վարած քաղաքականության մեջ և ստիպում նրան քողարկել իր գաղութային ձգտումները, քանի որ կաթողիկոսական իշխանության սահմանափակումը համայն հայության կողմից կդիտվեր որպես բռնացում նրա իրավունքների վրա. և, ինչ խոսք, ոչ թե կբարձրացներ, այլ ընդհակառակը, բոլորովին կգցեր Ռուսաստանի հեղինակությունը նրանց աչքին։

Այս հարցերը լուծելու համար սկսված բարդ ու հակասական աշխատանքը, որը ցարական պաշտոնյաներին ստիպեց ցուցաբերել մեծ զգուշություն և օրենսդրական ձևակերպումների ճկունություն, տևեց գրեթե 9 տարի և ավարտվեց հայտնի «Պոլոժենիեով», մի փաստաթուղթ, որը ժամանակին թեժ կրքեր բորբոքեց և հասարակական տարբեր խավերի բախման առիթ տվեց։ Այն խոր ազդեցությունը, որ «Պոլոժենիեն» ունեցավ ոչ միայն արևելահայերի ներքին կյանքում, այլև համայն հայության ճակատագրի վրա, հարկադրում է ավելի մոտիկից ու խորությամբ ծանոթանալու այդ փաստաթղթի ստեղծման պատմությանը։

Եկեղեցու բարեկարգության հարցը հատկապես ծառացավ XIX դ. սկզբին, կապված Դավիթ-Դանիելյան Գավազանակովի հետ։

«Հայոց անիշխանության ժամանակները,—գրում է Ալ. Երիցյանը,—մանավանդ վերջին դարերում, Հայաստանյայց եկեղեցու կառավարությունը վերին աստիճանի անկարգ ու անկանոն ընթացք էր բռնած։ Կաթողիկոսը եպիսկոպոսների հետ, եպիսկոպոսները քահանաների հետ, իսկ սոքա ժողովրդականաց հետ—ամենքն էլ վարվում էին ավելի նահապետական և հայրական իրավունքով, քան թե եկեղեցական օրինաց համեմատ։ Կաթողիկոսը պատժում էր կամ պարգևում ըստ իր քմաց և ճաշակին, առանց որևէ սահմանադրական օրենսդրության, և այդ կամքին հոգևորականները միակերպ հնազանդում էին, որովհետև կաթողիկոսը իրենց Գլուխն ու Հոգևոր հայրն էր»[8]։ Եկեղեցական օրենսդրությանը շատերը ծանոթ չէին, իսկ կանոնագրքերն էլ ձեռագիր վիճակում էին, հազվագյուտ, թանկարժեք ու ոչ բոլորին մատչելի և, որ գլխավորն է, լիքն էին սխալներով ու հակասում էին միմյանց։

Ահա այսպես էր կառավարվում հայոց եկեղեցին, երբ Հովսեփ Արղությանն արքեպիսկոպոսը, իր թեմը բարեկարգելու մտքով, ռուս ուղղափառ եկեղեցու վարչության օրինակով, XVIII դ. վերջերին Աստրախանում կոնսիստորիա է հիմնում։ Կոնսիստորիան կանոնավոր դիվանատուն ուներ, հաշվագրքեր էր պահում, հաշիվ էր տալիս ու առնում։ «Միով բանիվ Ռուսաստանի վիճակը մի տեսակ բարեկարգություն ստացավ, թեև կոնսիստորների ներքին կարգ ու կանոնները ռուսական էին և համաձայնեցրած չէին Հայաստանյայց եկեղեցու հոգվոյն հետ»[4]։

Հ. Արղությանին հաջորդած Եփրեմ արքեպիսկոպոսը, ըստ երևույթին, շատ գոհ էր իր վիճակում մտցրած բարեկարգություններից, ուստի ցանկանում էր, որ բուն Հայաստանի թեմերը ևս նույն բարեկարգությունն ունենային։ Այս գաղափարը համակրում էին ռուսական արքունիքում բարձր դիրքերի հասած և հայոց գործերի վրա մեծ ազդեցություն ունեցող լազարյանները։ Նրանք գտնում էին, որ հայ եկեղեցու համար այդպիսի խառը ժամանակներում (Դավիթ-Դանիելյան Գավազանակովի), ռուսական եկեղեցու օրինակով էջմիածնի միաբաններից կազմված սինոդական կառավարությունն ուղղակի անհրաժեշտություն է։ Պետերբուրգում գտնվող Մինաս Լազարյանը 1805 թ. գրում է Աստրախան՝ Եփրեմին և Թիֆլիս՝ Հովհաննես Գեղարդակրին, առաջարկելով նրանց, որ Դանիելին համոզեն էջմիածնում մի խոր-

8 Ալ. Երիցյան, Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար, Թիֆլիս, 1877, էջ 6։

4 Նույն տեղում, էջ 8։

հուրդ կազմելու իր նախագահությամբ ու որոշ կանոններով կառավարելու եկեղեցու վարչական գործերը։

Այդ ժամանակ Դանիելն աքսորված էր Մարաղա, սակայն ստանալով հիշյալ անձանց դրությունը, 1806 թ. հուլիսի 10-ին մի ընդարձակ կոնդակ[5] է ուղարկում էջմիածնի միաբաններին՝ բարձրագույն խորհրդարան կազմելու վերաբերյալ։ Հաջորդ՝ 1807 թ., աքսորից վերադառնալուց հետո նա սկսում է զբաղվել այդ հարցով, իսկ 1808 թ. հունիսի 23-ին բացում է Բարձրագույն խորհրդարանը կամ «սինոդոսը» և ինքն է առաջինը երդվում, որ առանց այդ խորհրդարանի «ոչ մի նշանավոր բան չէ գործելու»։ Խորհրդարանի կազմի մեջ մտնում էին էջմիածնի բարձր հոգևորականության ներկայացուցիչները։ Խորհրդարանը օգտվում էր խորհրդակցական մարմնի իրավունքներից։ Սա մի կարևոր քայլ էր հայ եկեղեցու գործերը կարգավորելու ուղղությամբ։

Վրաստանում հաստատվելու առաջին իսկ օրերից սկսած ռուսական իշխանությունները սկսում են տեղեկություններ հավաքել հայոց եկեղեցու դրության մասին։ Հայ եկեղեցու հարցում ցարիզմի հետամտած նպատակները ավելի բացահայտ են դառնում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո։ 1828 թ. նոյեմբերի 16-ին Ի. Պասկևիչը գաղտնաբար դիմում է օտարադավան հպատակների հոգևոր գործերի մինիստր Դ. Բլուդովին։ Նկարագրելով հայոց եկեղեցու ներսում տիրող «անկարգություններն» ու խառնաշփոթ վիճակը, Ի. Պասկևիչը գրում է. «Հայոց հոգևոր վարչության գործերն այսպիսի դրության մեջ այլևս չեն կարող մնալ և հարկ է կտրուկ միջոցներով ապագա չարիքների առաջն առնել, որոնց հետևանքները տհաճ պետք է լինեն...»[6]։ Դրությունը շտկելու համար նա առաջարկում է մի շարք միջոցառումներ, որոնք ամփոփում է յոթ կետերի մեջ։ Յոթերորդ կետում, մասնավորապես, ասվում է. «Այժմ իսկ ձեռնամուխ լինել Հայոց եկեղեցու ղեկավար վարչության համար ընդհանուր և դրական սահմանադրություն կազմելու, ճշտությամբ որոշել, թե որոնք են պատրիարքի, սինոդի և վիճակավոր եպիսկոպոսների իրավունքները և սահման դնել ամենքի իշխանությանը։ Իմ կարծիքով, ամենևին չպետք է ժամանակ կորցնենք այս մասին մի ընդհանուր կանոնադրություն կազմելու համար...»[7]։ Սակայն Ի. Պասկևիչի հոգսը բոլորովին էլ հայոց եկեղեցու քաղաքային դրությունը վերացնելը չէր և «կղերական բարեկարգությունն այնքան ցավեցնող անհետաձգելիություն չէր, որ ռուսաց կայսեր փառավորված ֆելդմարշալը, դեռ նոր վերջացրած թյուրքական արյունահեղ և երկարատև պատերազմը, վեր կենար նրա համար խաչվելու»[8]։ Հրապարակային ձևակերպման հետևում կանգնած իսկական նպատակը բացահայտվում է Դ. Բլուդովին ուղղված Ի. Պասկևիչի մեկ ուրիշ գրությունից, որտեղ, պարզաբանելով Ամենայն հայոց կաթողիկոսի դերը, նա գրում է. «Հարկ եմ համարում ընդսմին ծանուցանել, որ մինչև հիմա էջմիածնի պատրիարքը եղել է գլուխ ոչ միայն հոգևորականության, այլև ընդհանուր հայոց ազգի նույնիսկ քաղաքական կառավարության մեջ, և պարսից տերությունը հայերին վերաբերող բոլոր դեպքերում միշտ գործել է պատրիարքի ձեռքով։ Բացի սրանից ռուսաց տերությանը այնպիսի անձ է հարկավոր, որը չարգելեր այս երկրի մեջ ռուսական կարգ ու կանոնները մտցնելուն»[9]։ Ուրեմն, առաջիկա կանոնադրությունը պետք է լիներ այնպիսին, որ ցարական կառավարությանը հնարավորու-

---

5 Դիվան Հայոց պատմության, Գիրք Բ, Թիֆլիս, 1893 էջ 203։

6 Акты, собранные Кавказской Археографической Комиссией (далее АКАК), т. VII, Тифлис, 1878, № 214.

7 Նույն տեղում։

8 Լեո, նշվ. աշխ., էջ 489։

9 АКАК, т. VII, № 214.

թյուն տար վերացնելու կաթողիկոսի քաղաքական իրավասությունները, հեշտությամբ միջամտելու հայկական եկեղեցու ներքին գործերին ու առանց խոչընդոտների անցկացնելու իր քաղաքականությունն Արևելյան Հայաստանում։

Վերևից ստացված պատասխանի արագությունը մեկ անգամ ևս ապացուցում է, թե կառավարող շրջաններում որքան մեծ կարևորություն էին տալիս այդ հարցին։ 1828 թ. դեկտեմբերի 25-ին Դ. Բլուդովը պատասխանում է Ի. Պասկևիչին. «...Ձեր նկարագրած մեքենայությունները և նրանցից առաջացած անկարգություններն այնքան ակնհայտ են և վնասակար, որ անշուշտ պետք է և այն էլ, որպես դուք ուղիղ նկատել եք, առանց այլևս ժամանակ կորցնելու միջոցներ ձեռք առնել վերջացնելու այդ բոլորը և, օգուտ քաղելով այդ հանգամանքից, մտցնել հայ-լուսավորչական եկեղեցու մեջ մի այնպիսի կազմակերպություն, որը համապատասխանի նույն եկեղեցուն պատկանող Ն. Կ. մեծության հպատակների բարօրությանը, նրանց տեղական պահանջներին և տերության ընդհանուր շահերին»[10]։ Դ. Բլուդովը չի հապաղում նաև պատմական տեղեկություններ ուղարկել հայոց եկեղեցու հին կազմակերպության մասին, սակայն չի կարելի ասել, թե այդ նյութերն աչքի էին ընկնում ճշգրտությամբ, քանի որ քաղվել էին հիմնականում XVII դ. կաթոլիկ քարոզիչների հրատարակություններից։

Կառավարող շրջանների ծրագրային դիտավորությունները մի մշակված կանոնադրության մեջ ամփոփելու համար Ի. Պասկևիչը Թիֆլիսում կազմում է գաղտնի հանձնաժողով, որը, «մի բյուրոկրատական հիմնարկություն էր, որ իհարկե, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել և որի կազմը ցույց է տալիս, թե ինչ տեսակ միջոցներով է նա կյանքի հրավիրված»[11]։ Հանձնաժողովը բաղկացած էր չորս հոգուց՝ Հայկական մարզի պետ Բ. Հ. Բեհբութով, որը «ոչ հայոց գիրը գիտեր, ոչ պատմությունը, ոչ եկեղեցական օրենքները և ծեսերը»[12], Սերովբե վարդապետ Կարնեցի, որի տեղեկությունները հայոց եկեղեցական օրենքների վերաբերյալ կասկածելի էին, «որովհետև նա ուսած էր միմիայն կաթոլիկաց դպրոցներում և երևի թե գիտեր այնքան, որքան հաղորդած էին նրա ժամանակ հակահայկական անհարազատ աղբյուրները»[13], Հակոբ Շահան-Ջրպետյան, որը չնայած իր լեզվաբանական հմտություններին, նշված հարցերում նույնպես սահմանափակ գիտելիքներ ուներ, և լեհ աստիճանավոր Օշկին, որը նույնիսկ չգիտեր հայոց լեզուն։ Եվ այսպիսի կազմ ունեցող հանձնաժողովը կոչված էր բարեկարգություն մտցնելու հայոց եկեղեցու գործերի մեջ, այն եկեղեցու, որը նույնիսկ ներկայացուցիչ չուներ այդ հանձնաժողովում։ Միայն Հովհաննես Կարբեցի արքեպիսկոպոսն այդ ընթացքում գտնվելով Թիֆլիսում, մի երկու անգամ հրավիրվեց նրա նիստերին։ Այդ մասին Ի. Պասկևիչը գրում է Դ. Բլուդովին. «Հոգևոր կողմից կարելի էր անդամ նշանակել նմանապես Կարբեցի Հովհաննես արքեպիսկոպոսին, բայց ես այդ չարի, որպեսզի տեղիք չտամ կարծելու, թե տերությունը կամենում է խառնվել Հայոց եկեղեցու գործերին՝ առանց պատրիարքի գիտության»[14]։ Սակայն, իրականում, առանց կաթողիկոսի գիտության ստեղծվել էր գաղտնի հանձնաժողով, առանց նրա գիտության այդ հանձնաժողովը սահմանում էր կաթողիկոսի իրավունքներն ու պարտականությունները, և ընդհանրապես, առանց կաթողիկոսի գիտության վճռվում էր հայոց եկեղեցու հետագա ճակատագիրը ու, երբ խոսքը վերա-

---

10 Նույն տեղում, № 216։

11 Լեռ, նշվ. աշխ., էջ 489։

12 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 550։

13 Նույն տեղում, էջ 562։

14 АКАК, т. VII, № 229.

բերում է այդ եկեղեցու մասնակցությանն իր ճակատագրի վճռման գործում, Ի. Պասկևիչն անհանգստանում է ինչ-որ կարծիքներից և հայտարարում, թե «առանց պատրիարքի գիտության» տերությունը չի խառնվի հայոց եկեղեցու գործերին։

Գաղտնի հանձնաժողովը եռանդով գործի անցավ և երկու ամսվա աշխատանքից հետո, 1830 թ. մարտի 11-ին Ի. Պասկևիչին ներկայացրեց մի զեկուցագիր, որի մեջ ասվում էր. «Համաձայն ձերդ պայծառափայլության հունվարի 8-ի հրամանագրին, ներկա կոմիտեն, քննելով այլասեռ դավանության նախարարի առ ձեզ ուղարկած թղթերը և համեմատելով դրանք պրոֆեսոր Սիրբիդի (Ջրպետյան—Կ. Ա.) տեղեկությունների հետ, գտավ, որ նախարար Բլուդովի առաջարկած հարցմունքները հիշյալ Սիրբիգը լուծել է կարելվույն չափ լրիվ և բավարար ձևով»[15]։

Ստանալով հանձնաժողովի պատրաստած նախագիծը, Ի. Պասկևիչն այն 1830 թ. մարտի 20-ին ուղարկում է Դ. Բլուդովին։

Հարկ է նշել, որ հանձնաժողովի վերաբերյալ օգտագործվող գաղտնի բառն այնքան էլ չէր համապատասխանում իր բովանդակությանը։ Արդեն նշել ենք, որ որոշ հարցերի մասին խորհրդակցելու համար հանձնաժողովի նիստերին մի քանի անգամ հրավիրվեց Հովհաննես Կարբեցին, և չնայած իշխան Վ. Բեհբութովը նրան «պատվիրեց լռություն պահել ընդմիշտ», այնուամենայնիվ, Կարբեցին չէր կարող հանձնաժողովի գոյության և գործունեության մասին չհայտնել Էջմիածնի իր մտերիմ միաբաններից թեկուզ մեկին, իսկ դա բավական էր, որ այդ մասին իմանար ամբողջ միաբանությունը։ Այսուհանդերձ, ինչպես կտեսնենք, Կարբեցին հանձնաժողովի գաղտնիությանը սպառնացող տեղեկությունների միակ աղբյուրը չէր։

«Պոլոժենիե» ստեղծումը չի սահմանափակվում միայն գաղտնի հանձնաժողովի գործունեությամբ։ Պատմությունը մեզ թողել է այն հայ կղերի անունները, որոնք, եթե անմիջական մասնակցություն չեն ունեցել այդ եկեղեցական կանոնադրության ձևակերպմանը, ապա իրենց անհեռատես գործունեությամբ նպաստել ու ավելի են արագացրել նրա իրականացումը։

Հաշվի առնելով եկեղեցական կանոնադրությանը վերաբերող գործի կարևորությունն ու լրջությունը, կառավարող շրջաններում չբավարարվեցին միայն Ի. Պասկևիչի հանձնաժողովի գործունեությամբ, և նպատակահարմար գտան հայոց եկեղեցու մասին տեղեկություններ ստանալ հենց բուն Էջմիածնից։ Այդ նպատակի համար որոշեցին օգտագործել Նփրեմ կաթողիկոսի քարտուղար Հովհաննես Ղրիմեցի վարդապետին, որը սինոդական կառավարության անդամի, ատենադպրի և թարգմանչի պաշտոն էր վարում։ Հովհաննես Ղրիմեցին մեծ պատրաստակամությամբ գործի է անցնում։ Նրան օգնելու նպատակով Դ. Բլուդովը, որի հետ Հ. Ղրիմեցին ակտիվ գրագրություն էր ծավալել, ուղարկում է ռուսաց եկեղեցական գործերի կանոնադրությունները, որոնք համեմատելով «արդեն եղած հայոց եկեղեցվո կառավարութեան այլ և այլ կանոնների հետ»[16], Հ. Ղրիմեցին մի նորն է կազմում և «Առաջնական ձևակերպութիւն կարգադրութեան յաղագս կառավարութեանց գործոց եկեղեցականաց Հայոց ի Ռուսաստան» վերնագրով 1830 թ. մարտի 20-ին № 24 գրությամբ առաջարկում է «ի նկատողություն և ի տնօրինություն նախարար Բլուդովին»[17]։ «Անցեալ տարվա (1829 թ.—Կ. Ա.) դեկտեմբերի 26-ին,—գրում է Հ. Ղրիմեցին,—ես պատիվ ունեցա ծանուցանել Ձերդ գերազանցության, թե Հայկական եկեղեցվո իրողությանց մեջ անկարգություններից փախչելու համար հավաքելով բուն տեղում այս գործի տեսչության վերաբերյալ կարևորները համեմատեցի այն թղթերի հետ, որ

---

15 Նույն տեղում, № 231։

16 Դիվան Հայոց պատմության, Գիրք Բ, էջ 253։

17 Նույն տեղում։

ստացա Ձեզանից, ողորմած տեր իմ, ուստի կարևոր դատեցի բաղադրել «առաջնական ձևակերպությունը» Ռուսաստանի Հայոց եկեղեցական գործերի կառավարության մասին։ Առ այս նախ և առաջ ղննեցի Գրիգորեան եկեղեցու գործերի կառավարութեան անցյալ եղանակների հանգամանքները՝ ուր այժմ՝ չնչին կարգադրութիւն անգամ չկա, ինչպես առաջուց ոչ մեկ և երկու անգամ պատիվ եմ ունեցել Ձեր գերազանցութեան հաղորդել...»[18]։ Հ. Ղրիմեցու այս գործունեությունը, ինչ խոսք, չէր կարող ծածուկ մնալ միաբանությունից, և, ինչպես գրում է Մ. Օրմանյանը, «Ղրիմեցին ալ կանոնական եկեղեցու ամփոփումը կազմած է, իհարկե ոչ առանց Սինոդի գիտակցութեան, և 1830 թ. մարտի 20-ին Պասկևիչին իրեն պատրաստել տուածը ղրկելու օրը, անգիտակից զուգադիպությամբ Ղրիմեցին ալ Դեմետր Բլուդովին յղած է իր կազմած ծրագիրը... Ղրիմեցին կը յայտարարէ թէ Արարատեան և Ջրպետեան իրեն աշխատակցած են և այս մտածել կու տայ թե պետական յանձնաժողովը ջանացած է անուղղակի յարաբերութիւններ ունենալ մայր-աթոռաց պաշտոնութեան հետ»[19]։ Իրոք, Հ. Ղրիմեցին գրում է, թե «Ի վերջո պարտք եմ համարում վկայել, որ սորա հետ ուղարկած Հայկական եկեղեցու կառավարութեան ձևակերպութիւնը կազմելիս մասնակցեցին և աշխատեցան՝ Հայոց վարդապետ Սերովբեն, ...և գիտնապետ Ջրպետը» և նույնիսկ խնդրում է Դ. Բլուդովին՝ «զանց չառնել Ձեր միջնորդությունը թագավոր կայսեր մոտ՝ նոցա յուրաքանչյուրին ամենաողորմածաբար շնորհելու հինգհարյուրական ռուբլի տարեկան թոշակ»[20]։

Այս հանգամանքը վկայում է, որ Թիֆլիսի հանձնաժողովի և Էջմիածնի միաբանության անդամի «անուղղակի հարաբերությունները» կրել են շատ գործնական բնույթ։

Արդեն նշել ենք, որ հանձնաժողովի անդամներն իրենց առջև դրված խնդիրները լուծելու համար չունեին բավարար պատրաստվածություն, իսկ քանի որ Հ. Կարբեցին էլ չկարողացավ օգտակար լինել նրան, ապա նպատակահարմար գտան կապվել Հ. Ղրիմեցու հետ, որը Հայոց եկեղեցու պատմության և օրենքների իմացությամբ թերևս ավելի բարձր էր կանգնած մյուս միաբաններից։ Սակայն չմոռանանք, որ Հ. Ղրիմեցին էլ հանձնարարություն ուներ Դ. Բլուդովից և, կապվելով Սերովբե վարդապետի ու Հ. Ջրպետյանի հետ, փաստորեն առիթ էր ներկայանում օգտվելու նրանց (հատկապես վերջինի) լեզվագիտական հմտություններից ու ավելի բարձր մակարդակով կատարելու Դ. Բլուդովի հանձնարարությունը։ Այս համատեղ գործունեության արդյունքը մեզ արդեն հայտնի է՝ «Առաջնական ձևակերպությունը» և գաղտնի հանձնաժողովի կազմած «Նախագիծ սահմանագրութեան յաղագս կառավարութեան գործոց հոգևորականութեան Հայոց Ի Ռուսիա», որոնք էլ Հ. Ղրիմեցին և Ի. Պասկևիչը նույն՝ 1830 թ. մարտի 20-ին ուղարկում են Դ. Բլուդովին։ Այստեղ հարկ ենք համարում բերել «Առաջնական ձևակերպության» և «Նախագծի» մի փոքր համեմատություն։

«Առաջնական ձևակերպություն»

«Այս կազմելիս աչքի առաջ ունեի երկու հանգամանք, նախ՝ Հայոց եկեղեցականների իրավունքների ու պաշտոնների ճիշտ որոշումը այժմեան խանգարմունքը անհետացնելու համար և ապագայում իրանց անպատշաճ գործերին միջամուխ լինելու տեղիք չտալու համար,

«Նախագիծ»

«Համաձայն Ձեր հրամանագրին, կոմիտեն աշխատում էր նախ ճշտությամբ որոշել Հայոց հոգևորականության իրավունքները, որպեսզի վերացվեն այժմյան եղած անկարգությունները և ապագայում էլ ամենևին տեղիք չտրվի հոգևորականությանը խառնվելու այն-

18 Նույն տեղում, էջ 254։

19 Մ. Օրմանյան, Ազգապատում, Գիրք 3, Երուսաղեմ, 1927, էջ 3601—3602։

20 Դիվան Հայոց պատմության, Գիրք Բ, էջ 259։

Երկրորդ՝ Ձեր գերազանցության դիտավորությունը, տաճկաբնակ հայերի էջմիածնի Աթոռի հետ միաբանելու վերաբերմամբ»[21]։

պիսի գործերում, որոնք իրեն չեն վերաբերում։

Երկրորդ՝ այլասեռ դավանության մինիստրության թղթերում նկատելով այն ենթադրությունը, որ Տաճկաստանի հայք միանան էջմիածնական Աթոռի հետ, կոմիտեն պարտք համարեց զանց չառնել և այդ Ձանգամանքը»[22]։

Կարծում ենք, հարկ չկա ամբողջությամբ բերել շարադրանքը, քանի որ երկուսն էլ կրում են միևնույն բովանդակությունը։ Մեզ համար, սակայն, էականն այն է, որ երկուսն էլ, անկասկած, պատկանում են միևնույն գրչին. դա ակնհայտ է։ Սակայն ո՞վ է հեղինակը։

Գաղտնի հանձնաժողովի առջև դրված խնդիրների լուծողը Ի. Պասկևիչի վկայությամբ Հ. Ջրպետյանն էր, որի «դիտական աշխարհում ունեցած հայագիտության հեղինակությունն ու հռչակն առհավատչյա էր, որ գործը իբր թե զերծ պիտի լինի պատմական սխալներից»[23]։ «Պրոֆեսոր Սիրբիդը,— գրում է Ի. Պասկևիչը,—շատ գիտնական մարդ է և հիմնավորապես գիտե հայոց լեզուն, պատմությունը և նրա եկեղեցական օրենքները։ Ճանաչելով նրան որպես շատ օգտակար անձ, ես վեց ամիս շարունակ զբաղեցրի նրան հայոց եկեղեցու նախկին և այժմյան սարք ու կարգի մասին տեղեկություններ հավաքելով, և պրոֆեսոր Սիրբիդը պատրաստել է արդեն մի պատմական տեսություն այն բոլոր փոփոխությունների, որ Հայոց եկեղեցու վարչության մեջ պատահել են առ այսօր»[24]։ Այդ պատմական տեսությունն էր՝ «Պատասխան և բացատրություն առաջարկած 85 հարցմունքներին՝ պատմության, եկեղեցական կանոնաց և հին ու նոր հայոց կղերականաց դրության մասին, համաձայն եղած սովորությանց և ըստ վկայությանց հայոց հեղինակաց», գրված 1829 թ.՝ ֆրանսերեն լեզվով։ 85 հարցմունքները[25] Դ. Բլուդովն առաջարկել էր Ի. Պասկևիչին, վերջինս էլ դրանք հանձնարարել էր հանձնաժողովին, և ինչպես վկայում են հենց իրենք՝ հանձնաժողովի անդամները, «ներկա կոմիտեն գտավ, որ նախարար Բլուդովի առաջարկած հարցմունքները ճիշյալ Սիրբիդը լուծել է կարելվույն չափ լրիվ և բավարար ձևով»[26] (ընդգծումը մերն է—Կ. Ա.)։

Ուրեմն «Նախագիծ սահմանադրութեան յաղագս կառավարութեան գործոց հոգևորականութեան Հայոց 'ի Ռուսիայի» հեղինակը Հակոբ Շահան Ջրպետյանն է։

Այժմ անցնենք Հ. Ղրիմեցու «Առաջնական ձևակերպությանը»։ Թիֆլիսում Հ. Ջրպետյանի մահվանից հետո մնացին ֆրանսերեն լեզվով մի շարք անտիպ աշխատություններ, դրանց թվում՝ «Քննություն նամակաց Հովհաննես Վարդապետի Ղրիմցոյ էջմիածնի պատրիարքական Աթոռի ներքին և արտաքին գործերի տեսչության մասին»[27]։ Այս հանգամանքը վկայում է, որ Հ. Ղրիմեցին հայոց եկեղեցու պատմության և օրենքների մասին նամակներով նյութեր էր մատակարարում Հ. Ջրպետյանին։ Վերջինս խմբագրում, համակարգում և կանոնադրական ձևակերպումների տեսք էր տալիս

---

21 Դիվան Հայոց պատմության, գիրք Բ, էջ 255։

22 AKAK, т. VII, № 231.

23 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 333։

24 AKAK, т. VII, № 229.

25 Նույն տեղում, էջ 273։

26 Նույն տեղում, էջ 231։

27 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մասն Բ, էջ 332։

այդ նյութերին։ Եվ քանի որ երկուսի առջև էլ դրված էր միևնույն խնդիրը, Հ. Ջրպետյանը, որպես փոխհատուցում Հ. Ղրիմեցու ծառայությունների, նրա համար կազմում է մի կանոնադրական նախագիծ, որի բովանդակությունը, ինչպես ցույց է տալիս վերն արված համեմատությունը, նույնն էր, ինչ որ հանձնաժողովի նախագծինը, և որը Հ. Ղրիմեցին նույն 1830 թ. մարտի 20-ին «Առաջնական ձևակերպութեան կարգադրութեան յաղագս կառավարութեան գործոց եկեղեցականաց Հայոց 'ի Ռուսիա» վերնագրով ուղարկում է Դ. Բլուդովին։ Ուրեմն «Առաջնական ձևակերպության» հեղինակը նույնպես Հ. Ջրպետյանն է։

Այսպիսով, ի մի բերելով այս հարցի վերաբերյալ Հակոբ Շահան Ջրպետյանի գործունեությունը, կարող ենք ասել, որ նա հայտնի չափով իր որոշակի մասնակցությունն ունի «Պոլոժենիեի» ստեղծման գործում, քանի որ նրա հեղինակած «Նախագիծն» ու «Առաջնական ձևակերպությունն» էին, որ Պետերբուրգում որոշ փոփոխությունների ենթարկվելով դարձան ցարական «Պոլոժենիեի» հիմքը։

Թիֆլիսի Հանձնաժողովի նախագիծը, սակայն, Պետերբուրգում հավանություն չգտավ, որովհետև «պատրաստված լինելով օրենսգիտությանն անհմուտ անձանց ձեռքով, միանգամայն զուրկ էր դրական օրենքի հատկություններից։ Դա ոչ միայն թերի էր ու անկատար, այլև իր էական մասերում չէր համապատասխանում ոչ մեր եկեղեցու վարչական հոգուն և ոչ նույնիսկ բարձրագույն իշխանության ցանկություններին ու ձգտումներին»[28]։ Այդ պատճառով էլ Պետերբուրգում ստիպված էին կազմել մի նոր հանձնաժողով, որը աշխատելով ավելի քան չորս տարի, փոփոխության ենթարկեց նախագծի որոշ կետեր և հրապարակի վրա դրեց «Պոլոժենիեն»։

Ալ. Երիցյանը «Պոլոժենիեն» «գրեթե բոլորովին տարբեր» է համարում «Թիֆլիսում պատրաստածից»։ «Համենայնդեպս այդ տարբերությունները հօգուտ հայոց եկեղեցու էին»[29],—գրում է նա։ Սակայն նախագծի կետերն ու «Պոլոժենիեի» հոդվածները համեմատելով, չենք կարող համաձայնվել այդ կարծիքին։

Պետերբուրգում, ինչպես ասվեց, Թիֆլիսի նախագիծը գոհունակությամբ չընդունվեց։ Դրա գլխավոր պատճառը թերևս այն շեշտված միտումնավորությունն էր, որով կազմվում էր նախագծի յուրաքանչյուր կետը։ Հ. Ջրպետյանը (ինչպես և Հանձնաժողովի մյուս անդամները), լավ գիտենալով Ի. Պասկևիչի և Ներսես Աշտարակեցու միջև եղած թշնամական հարաբերությունները, և ինքն էլ անձնական թշնամություն ունենալով նրա դեմ, ամեն մի կետ հորինելիս միշտ աչքի առաջ ուներ «Քիշնև հեռացած արհուն» (Աշտարակեցուն)։ Նա ջանք չէր խնայել ստեղծելու մի այնպիսի կանոնադրություն, որ «եթե Ներսեսին հաջողվի էլ կաթողիկոսանալ, ապա առաջուց սահման լինի դրված նրա փառասիրական միահեծան իշխանությանը և նրա ամեն մի քայլը կախումն ունենա էջմիածնի ծայրագույն խորհրդից (Սինոդից)»[30]։ Այդ իսկ պատճառով նախագծի կետերը (հատկապես կաթողիկոսի իշխանությունը սահմանափակող) շատ կտրուկ ու շեշտված բնույթ ունեին և, բնականաբար, չէին կարող գոհացնել կառավարող շրջաններին, որոնց նպատակը հմտությամբ խմբագրված մի ծրագիր ունենալն էր, որը բարձրագույն հաստատությամբ դրական օրենք կդառնար և այնուհետև, տասնյակ տարիներ անփոփոխ մնալով, իր էական մասերով ընդմիշտ հաստատ հիմք կլիներ հայոց եկեղեցական վարչության համար։

Ուրեմն, նախագծի հիմնական թերությունը նրա կետերի ձևակերպման մեջ էր և Պետերբուրգում կազմված նոր հանձնաժողովն իր ամբողջ գործունեության ընթացքում ձգտում էր ոչ թե փոխել նրա բնույթն ու ուղղվածու-

28 Նույն տեղում, էջ 375։
29 Նույն տեղում, էջ 348։
30 Նույն տեղում, էջ 376։

թյունը, այլ հոդվածներին հաղորդել ավելի ընդհանրական բնույթ և, այսպես ասած, դիվանագիտական ճկունություն (մասնավորապես պետական միջամտությանը վերաբերող կետերին)։ Հարկ է ասել, որ երևի թե այդ բանը Պետերբուրգի հանձնաժողովի օրենսդիրներին հաջողվեց, որովհետև «Պոլոժենիեի» հոդվածներն ընթերցելիս թվում է, թե այն իր մեջ ոչ մի այլ նպատակ չի պարունակում, բացի հայոց եկեղեցական գործերում բարենորոգումներ անցկացնելը։ Թերևս այն հանգամանքն է պատճառը, որ Ալ. Երիցյանը «Պոլոժենիեի» փոփոխությունները համարում է «հօգուտ հայոց եկեղեցու»։

Մինչ Պետերբուրգում զբաղված էին հայ եկեղեցու կանոնադրության մշակումով, այդ նույն սկեռեցու ներսում ծագեցին գժտություններ՝ Եփրեմ կաթողիկոսին փոխարինած Հովհաննես Կարբեցու և միաբանության մի քանի անդամների միջև[31]։ Դրանք մեզ հետաքրքրում են միայն այնքանով, որքանով կապ ունեն «Պոլոժենիեի» ստեղծման հետ։

Մինչև միաբանների շարժումը կառավարությունը «Պոլոժենիեի» պետական միջամտությանը վերաբերող կետերի հարցում ցուցաբերում էր որոշ զգուշություն, ռակայն այժմ դրա կարիքը վերանում էր և այդ հոդվածները պետական հիմնավորմամբ ներկայանում էին որպես հայոց եկեղեցու ներսում կարգ ու կանոն հաստատող։ «Կարևոր է մի «Պոլոժենիե» կամ կանոնադրություն հայոց եկեղեցու կառավարության մասին Անդրկովկասում,— գրում է Ռոզենը Դ. Բլուդովին,—որ կարողանար օրինական պարտավորությունների սահմանների մեջ զսպած պահել որպես կաթողիկոսին, նույնպես և էջմիածնական հոգևորականության մյուս դասակարգերը»[32]։

Այս ընթացքում արդեն «Պոլոժենիեի» նախապատրաստական աշխատանքները մտել էին իրենց եզրափակիչ փուլը և Պետերբուրգի հանձնաժողովը 1835 թ. վերջերին այն ներկայացրեց ցարի հաստատմանը։

1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ I-ի հրամանագրով «Պոլոժենիեն» հաստատվեց՝ «Բարձրագույն կարգադրությամբ յաղագս կառավարության գործոց Լուսավորչական Հայոց եկեղեցոյ 'ի Ռուսաստան» վերնագրով։

Այսպես կյանք ստացավ այդ փաստաթուղթը։

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ «ПОЛОЖЕНИЯ»

К. В. АЛЕКСАНЯН

Резюме

Одним из основных звеньев политики втягивания Восточной Армении в общую орбиту своего колониального владычества были принимаемые царизмом меры в отношении армянской церкви. Но некоторые местные особенности придавали этой политике царского правительства большую осторожность и двойственность. Сложная и противоречивая работа, начатая для решения вопросов, касающихся армянской церкви, продолжалась почти 9 лет и завершилась известным «Положением»—документом, который в свое время накалял ожесточенные страсти и стал поводом столкновения разных общественных слоев.

---

31 Այս մասին տես՝ Դիվան Հայոց պատմության, Գիրք Բ, էջ 308—310։

32 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մասն Բ, էջ 198։